# ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային «Կումայրի» օրաթերթի հավելված

1991 թ. հունիս, № 32։ Գինը՝ 50 կոպ.



Շառլ Ազնավուրը մանկական հիվանդանոցում։



Փրկարար շունը։
Լուսանկարները՝ Հմ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ





Լուսանկարները՝ Հմ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ

# ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՎԵՆԵՏԻԿ

ՀՌՈՄ, (ՏԱՍՍ-ի թղթ.)։ «Ավերիչ երկրաշարժից հետո երեք օր անց հայտնվելով Երևանում, հիվանդանոցներում այցելում էի երեխաներին։ Նրանցից մի քանիսը ինձ հարցուփորձ էին անում Վենետիկի մասին։ Այն ժամանակ ես նրանց խոստացա հրավիրել այնտեղ։ Եվ ահա վերջապես այդ երազանքն իրականացավ» — լրագրողներին պատմեց Իտալիայի «Միասին հանուն խաղաղության» միավորման նախագահ Մարիա Պիա Ֆանֆանին։ Այդ կազմակերպության հրավերով Վենետիկ ժամանեցին 98 երեխաներ Լենինականից, Սպիտակից և այլ քաղաքներից, որոնք տուժել են տարերային աղետից։ Նրանցից շատերը զրկվել են ծնողներից, մոտիկ ազգականներից։

Այսօր երեխաներն այցելեցին Վենետիկի մոտակա Սուրբ Ղազար կղզու հայկական վանքը։ Այդ համայնքը այստեղ հիմնվել է 18-րդ դարի սկզբներին։ Երեխաները դիտեցին վանքի տարածքը, եղան միաբանության թանգարանում, Մատենադարանում, որտեղ հավաքված են Հայաստանի պատմության վերաբերյալ բազմաթիվ գրքեր և այլ արժեքավոր նյութեր։

«Մենք ուրախ ենք, որ հայ երեխաները եկել են Իտալիա, — ասաց Մ. Ֆանֆանին։ — Մեր նախաձեռնությունը համերաշխության և Հայաստանի ժողովրդի հանդեպ սիրո նշան է։ Երեխաները եղան Վենետիկում, և, կարծում եմ, որ այդ ուղևորությունը օգտակար էր նրանց համար»։ «Մենք հույս ունենք մեզ մոտ հայ երեխաների խմբեր հրավիրել ամեն տարի,— ընդգծեց «Միասին հանուն խաղաղության» միավորման նախագահը։ Նա պատմեց ,որ հենց որ հայոց հողում տեղի ունեցած ահավոր աղետի գույժը հասավ Իտալիա, միավորումը գործիքներ, մթերք և առաջին անհրաժեշտության այլ առարկաներ առաքեց երկրաշարժից ավերված Սպիտակ։ Ներկայումս Իտալիայի աջակցությամբ այնտեղ կառուցվել են բնակելի ավան, հիվանդանոց և դպրոց։

Մի քանի օր հետո հայ երեխաների խումբը Վենետիկից կմեկնի Հռոմ, որտեղ նրանց կընդունեն Հռոմի կաթոլիկ եկեղեցու պետ Հովհաննես Պողոս 2-րդ պապը և Իտալիայի պրեզիդենտ Ֆրանչեսկո Կոսիգան։

6. 07. 89 թ.

# ՊԻՃԻԿՅԱՆՆԵՐԻ ԳԵՐԴԱՍՏԱՆԻՑ







*Տարերային աղետը Պիճիկյաններին էլ չշրջանցեց։ Նրանցից վեցը դարձան անմեղ զոհեր ու հիմա մերձավորներն ու հարազատները նրանց մասին խոսում են ցավով ուափսոսանքով։*

*Տան ավագը՝ ՄԱՔՍԻՄ ՊԻՃԻԿՅԱՆԸ, գերդաստանի ավագն էր, ծնվել էր 1934 թը վականին։ Աշխատում էր որպես բանվոր մազնիսահաղորդիչների գործարանում։*

*ՄԱՐԻՆԵ ՎԱՂԻՆԱԿԻ ՊԻՃԻԿՅԱՆԸ Մաքսիմի հարսն էր։ Ծնվել է 1960 թվականին, մեր քաղաքում։ Սովորել է թեթև արդյունաբերության տեխնիկումում։ Այն ավարտելուց հետո ամուսնացել է և լավ ընտանիք կազմել։ Ուներ մեկ երեխա։ Այդ չարաբաստիկ օրը չհասցրեց ԱՐՏՅՈՄԻԿԻ հետ դուրս գալ տնից...*

*ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՔՍԻՄԻ ՊԻՃԻԿՅԱՆԸ (ՋՈՒԼՈՅԱՆ) ծնվել է 1960 թ., սովորել է № 35 դպրոցում։ Միջնակարգն ավարտելուց հետո ամուսնացել էր և ուներ երկու երեխա՝ ԱՐՄԻՆԵ ԵՎ ԱՐՄԵՆ ՍՈՒՐԻԿԻ ՋՈՒԼՈՅԱՆՆԵՐԸ, որոնք № 29 դպրոցում էին սովորում, բարձր առաջադիմությամբ։ Ուսուցիչները գովեստով էին արտահայտվում նրանց հասցեին։ Հազարավոր դպրոցականների հետ նրանց կյանքն էլ ընդհատվեց, դարձավ հուշ և հիշողություն։*







# ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՕՐԵՐԻ ԽՐՈՆԻԿԱ



«ԿՈՒՄԱՅՐԻ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ
ԿՈՒՄԱՅՐԻԻ ՔԱՂՀՐԱՏ ՊԱՏՎԵՐ № 1801